



Մանօթանանք Օնթարիոյի

ԱՆԿԱՐՈՂ ՄԱՐԴԻԿ

Անկարող անձը կը պահանջէ աջակցութիւն ամէնօրեայ կեանքի և պէտք կ'ունենայ ծառայութիւններու:

Անկարողութիւնները կը ներառեն տեսողական, լսողական, ֆիզիքական, խօսելու կամ լեզուներու, հոգեկան, ուսուցման, մտային կամ զարգացման և մթնոլորտային պարագաներ:

Գիտցէք անկարող մարդոց իրաւունքներու մասին Օնթարիոյի մարդու իրաւունքներու օրինագրի տակ այցելելով Ontario Human Rights Commission: www.ohrc.on.ca կամ findlink.at/acccsibact

ՕՆԹԱՐԻՈՅԻ ՀԱՇՄԱՆՂԱՍՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ (ONTARIO DISABILITY SUPPORT PROGRAM (ODSP))

Օնթարիոյի հաշմանդամութեան աջակցութեան ծրագիրը կ'օգնէ անկարող մարդոց որոնք ֆինանսական կարիք ունին և/կամ գործ կը փնտռեն:

Աւելի գիտնալու համար, այցելեցէք www.mcass.gov.on.ca կամ findlink.at/ont-dsp

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄՔ

Community Care Access Centre (CCAC) կը դասաւորէ ծառայութիւններ օգնելու անկարող մարդոց որպէսզի ապրին անկախօրէն իրենց համայնքներուն մէջ: (CCAC)-ի պաշտօնէաները կը ներկայացնեն աջակցութիւն եւ տեղեկութիւններ առողջապահութեան, օրուայ ծրագիրներու, օգնական բնակարանի եւ երկար ժամանակի խնամքի կեդրոններու վերաբերեալ: Յաւելեալ տեղեկութիւններու համար, այցելեցէք www.health.gov.on.ca կամ findlink.at/Ccac-loc

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կան շատ մը կառավարական ծրագիրներ որոնք ձեռնտու են անկարող չափահասերու և մանուկներու: Այս ծրագիրները կը ներառեն արձանագրուած խնայողութեան հաշիւներ (registered savings accounts), տուրքի վարկեր (tax credits) եւ ֆինանսական օգնութեան ուրիշ ձևեր: Հաշմանդամութեան աջակցութեան ծրագիրներու մասին տեղեկութիւններու համար, այցելեցէք www.canadabenefits.gc.ca կամ findlink.at/CanBenefit

1-855-626-0002
www.orientationontario.ca



Գիտէ՞ք թէ:

Եօթը անձերէ մէկը Օնթարիոյի մէջ որոշ տեսակի հաշմանդամութիւն ունի:



ՄԱՏՉԵԼԻՈՒԹԵԱՆ ԶԱՓԱՆԻՇԵՐ

Օնթարիոյի անկարողներուն մատչելիութեան օրէնքը (Accessibility for Ontarians with Disabilities Act (AODA) 2005), կը նշէ չափանիշեր վստահեցնելու թէ անկարող մարդիկ կարող են լրիւ մասնակցիլ Օնթարիոյի հասարակութեան մէջ: Բոլոր գործերը եւ կազմակերպութիւնները Օնթարիոյի մէջ պէտք է որ հետեւին մատչելիութեան չափանիշերուն, յաճախորդի ծառայութեան, աշխատանքի, տեղեկութեան և հաղորդակցութեան, փոխադրումի և հասարակական տեղերու մէջ:

- Գիտցէք (AODA)-ի մասին այցելելով:- www.ontario.ca կամ findlink.at/acccsibact
- Գիտցէք մատչելիութեան չափանիշերու մասին:- www.ontario.ca կամ findlink.at/acccsstandr

Անկարող մարդոց ծրագիրներու եւ ծառայութիւններու մասին տեղեկութիւններու համար, հեռաձայնեցէք 211 կամ այցելեցէք Disability Doorway - www.disabilitydoorway.com